

ՔՈՒՐԲԱՐԱՆՈՒՔՅՈՒՆՆԵՐԸ ՊՈՂՍԱՀԱՏ ԲԱՐԲԱՌՈՒՄ (ԲԱՅԵՐ)

Փոխառությունների պրոբլեմը և դրա հետ սերտ կապված՝ լեզվի տարբեր մակարդակների ներթափանցման և օտար լեզվի ազդեցությանը ենթարկվելության հարցը, գրավել և գրավում է հետազոտողների ուշադրությունը: Այս կապակցությամբ հայ-թուրքական լեզվական առնչությունների ուսումնասիրությունը անվիճելի գիտական հետաքրքրություն է ներկայացնում ինչպես հայագետների, այնպես էլ թուրքագետների համար: Այս առնչությունների ուսումնասիրությունը սկսվել է դեռևս 19-րդ դարի սկզբին և հիմք դրել ամբողջ ուղղության ստեղծման, որ ստացավ Armeno-Turcica անունը: Հայ-թուրքական լեզվական առնչությունների ուղղությամբ բոլոր որոնումները վերաբերում են գրավոր գրականության հուշարձաններին:

Սակայն, հայ թուրքական լեզվական առնչությունները բարբառագիտության տեսակետից, և, մասնավորապես, թուրքաբանության պլանով, դեռևս անբավարար է ուսումնասիրված: Հայոց լեզվի որոշ բարբառների ուսումնասիրությունը հնարավորություն կտա լուսաբանել թուրքական լեզուների պատմական վիճակի առանձին հարցեր: Այս կապակցությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում պոլսահայ բարբառը, քանի որ այն երկար ժամանակ սերտ կապի մեջ էր գտնվում թուրքերեն լեզվի հետ:

Արևմտահայ դասական գրող Հ. Պարոնյանի ստեղծագործություններից (Երկեր 11 հատ. Երևան, Պետհրատ, 1931—1948 թթ.) քաղված նյութի հիման վրա մենք փորձել ենք քննել Կոստանդնուպոլսի բարբառի հայոց լեզվի թուրքաբանությունները, տալ դրանց բառա-իմաստաբանական և ձևաբանական բնութագիրը: Ներկա հոդվածում քննարկվում են բայ-թուրքաբանությունները հայոց լեզվի Կոստանդնուպոլսի բարբառում:

Վերջինիս մեջ թուրքերենից փոխառված բայերը գոյականներից հետո քանակով և օգտագործելիությամբ գրավում են 2-րդ տեղը:

Հր. Աճառյանը, դասակարգելով փոխառվող բայերը, դրանք բաժանում է 2 խմբի.

1. Թուրքական բայական հիմքեր, որոնք ձևավորված են բայի հայկական քերականական ձևերով.

2. Բաղադրյալ բայեր, որոնց անվանական մասը կազմված է թուրքերեն դերբայից, իսկ բայական մասը՝ հայերեն ընել (etmek), ըլլալ (olmak) օժանդակ բայից:

Մեր հավաքած փաստական նյութը թույլ է տալիս ընդլայնել այս դասակարգումը և մանրամասնորեն կանգ առնել տարրալուծական բնույթի բայերի վրա, քանի որ օրինակները խոսում են փոխառությունների էլ ավելի մեծ բազմազանության մասին:

Բայերի մեր առաջադրած դասակարգումը ենթադրում է երեք խումբ.

1. Բայի հայկական քերականական ձևերով կազմված թուրքական բայական հիմքեր.

2. Բաղադրյալ բայեր, որոնք կազմված են թուրքական անունից և հայերեն օժանդակ բայից: Տվյալ խմբի բայերի մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում բայական դարձվածքաբանությունները:

3. Տարալուծական — միշ ընել (— miş ənel) և միշ ըլլալ (miş əllal) բայեր:

1-ին խմբի բայերի թիվը սահմանափակ է, սակայն կարելի է նկատել հետևյալ օրինաչափությունը. միևնույն բայերը բազմիցս հանդիպում են տեքստերում: Այդ փաստը խոսում է այն մասին, որ նրանք ուսումնասիրվող շրջանում մտած են եղել Ստամբուլի հայ բնակչության առօրյա բառապաշարի մեջ:

Դիմենք օրինակների:

Թուրքերեն cal-mak բայը անցել է հայոց լեզվին, պահպանելով միայն իր որոշ նշանակությունները. 1. խփել, զարկել, 2. նվազել (հրաժշտական գործիքի վրա):

...մինչև իրիկուն բիանո կը շալե... հ. 8, էջ 154.

շալ-ել—çal-mak «նվազել» (հրաժշտ. գործիքի վրա)

շալ-ե-çal-e եզակի թիվ, 3-րդ դեմք ներկա ժամանակ սահմանական եղանակ:

...երբեմն մատվրներովդ կը շալես ալ... հ. 10, էջ 124:

շալ-հլ—çal-mak «խաղալ»

շալ-ես—çal-es 3-րդ դեմք, եզակի թիվ, ներկա ժամանակ, սահմանական եղանակ:

Քուրքերեն լեզվում բայագոյացման երկու ձև կա—համադրական և տարրալուծական: Համադրական բայերը բաժանվում են արմատական և ածանցյալ տեսակների:

Ածանցյալ հիմքերով բայերը կազմվում են անուններից՝ տարբեր արտածվող և ոչ արտածվող ածանցների օգնությամբ:

Հետազոտվող լեզվում կարելի է նշել տարրալուծական հետևյալ բայերը *şişmarla* ածանցյալ բայը կազմված *şişman* (գեր, շաղ, ճարպոտ, պիրկ) ածականից արգասավոր *la-վերջածանցից*, որը անուններից բայական հիմքեր է կազմում:

Սակայն Կոստանդնուպոլսի հայերի խոսքում *şişmala* = —բայի հիմքը կորցնում է վերջածանցը:

...ինչպես, կը շիշմաննան կոր... հ. 10, էջ 97:

կը շիշման-նան—3-րդ դեմք, հոգն. թիվ սահմ. եղանակի ներկա շարունակ. ժամանակ, շիշման-նալ—*şişmanla-mak* գիրանալ կը շիշման-նան *kə şişman-nankor* 3-րդ դեմք, հոգնակի,

թիվ սահմանական եղանակի ներկա շարունակական ժամանակ:

...Անճարակներ մնացել ենք, հազրբին կը պեթլեենք... հ. 2, էջ 71. պեթլե-ել *սսպասել*»:

ածանցյալ բայ կազմված *le* աֆֆիկսով: *bek* անվանական մասից:

...կենն մի պաշլայեր, աստվածդ սիրես... հ. 6, էջ 49:

պաշլա-յել—*başla*=mak «սկսել»

ածանցյալ բայ՝ կազմված =*la*=աֆֆիկսից *baş* անվանական մասից:

մի պաշլա-յեր-*mi başla-yer* 2-րդ դեմք, եզակի թ. հրամայական եղ. ...ինձի նայե երեկ գիշերվան պես նորեն շպաշլայինք... հ. 2, էջ 66. շպաշլա-յինք—*çə başla-yenk* ժխտական հոլովում, 1-ին դեմք, հոգնակի թիվ ապառնի ժամանակ, ընձական եղանակ:

Ինչպես նշվեց վերը, հայկական քերականական ձևավորմամբ քուրքական բայերի՝ փոխառությունների թիվը սահմանափակ է, բայց դրանց կիրառությունը շատ տարածված էր:

Մի այլ, բայց ավելի մեծ խումբ են կազմում բարդ բայերը, որոնք կազմված են թուրքական անունից և հայկական օժանդակ բայից:

Ա. Կոնոնովը «Ժամանակակից թուրքերեն լեզվի քերականութուն» աշխատողության մեջ գրում է. տարբալուծական բնույթի թուրքական բայերը բաղադրյալ բայեր են, որոնք կազմվում են 2 տարրից. անունից, իսկ ավելի հազվադեպ՝ անունների խմբից և բառա-շարահյուսական հատուկ դեր ունեցող բայից:

Այսպիսի բաղադրյալ բայերում նախնական ներքին հարաբերությունները իրենցից բայական ստորոգյալի նկատմամբ լրացման հարաբերակցություն ունեն: Հետագայում 2 մասերը միաձուլվել են լեքսիկական մի ամբողջության մեջ, իսկ նշված բայերը դարձել են բառակազմական տարր¹:

Թուրքերենում բառակազմա-շարահյուսական նշանակություն ունեցող օժանդակ բայերի շարքն են դասվում etmek, eylemek, kılmak բայերը:

Պոլսահայերի բարբառում թուրքերեն օժանդակ բայերը մեծ մասամբ օգտագործվում են ընել (etmek) և ըլլալ (olmak) օժանդակ բայերի հետ: Etmek (ընել) բայը կազմում է ներգործական շեղոք սեռի բայեր: Բաղադրյալ բայի ներգործական կամ շեղոք լինելը պայմանավորված է անվանական մասով:

Մեծ մասամբ դա գոյական է՝ թուրքական կամ փոխառված արմատով:

Ընել (etmek) օժանդակ բայով կազմված ներգործական սեռի բաղադրյալ բայեր.

...իսթի կընն կոր...—արդուկում է... հ. 10, էջ 97.

իսթի ընել—ütü etmek «արդուկել»

իսթի—ütü «արդուկ»

...թող չի գար, մենք տավեթ ըրինք²,... հ. 7, էջ 30.

տավեթ ընել—davet etmek «հրավիրել»

տավեթ—davet «հրավերք», «խնջույք», «բանկետ»

...խննթ շենք, որ ձեզի տիկուրթա ընենք... հ. 2, էջ 101.

սիկուրթա ընել—sigorta etmek «ապահովագրել»

սիկուրթա—sigorta «ապահովագրություն»

...ժողովուրդը միայն դայս ըրի կըսե... հ. 5, էջ 26.

¹ Ա. Կոնոնով, Ժամանակակից թուրք. լեզվի քերակ., Մոսկվա-Նիժնիգորոդ, 1956, էջ 263:

դայալ ընել—kaybetmek «կորցնել»

դայալ—kayep «կորուստ», «բացակայություն», «անհետացում»

...չընդունված ըլլալը պիտի գրով հաղորդվի իրեն, որպեսզի խսթինաֆ ընե. հ. 2. էջ 22.

խսթինաֆ ընել—istinaf etmek «ներել»

խսթինաֆ—istinaf ներում

...աֆ կընեք, ամա Համբարձում աղա, սա ըրածնիդ ալ շվայելեր... հ. 10. էջ 117.

աֆ ընել—afietmek «ներել»

աֆ—af «ներողություն»

...ատիկա ատեթա ֆասլ ընել է... հ. 10. էջ 79.

ֆասլ ընել—fasletmek «բաժանել», «վերլուծել», «կարգավորել»

ֆասլ—fasei «բաժանմունք», «մաս», «գլուխ»

...լիքորինողները տակավին թելեկրաֆ կամ շմենտիֆեր իճատ շին ըրած...

իճատ ընել—icat etmek «հայտնագործել»

իճատ—icat «հայտնագործում», «բացահայտում»:

Հատուկ բառա-շարահյուսական նշանակություն ունեցող թուրքերեն այն բայերը, որոնք բաղադրյալ բայերի բառակազմական տարրեր են, ինչպես օր. etmek բայը հաճախ աֆիքսային կրկնականեր ունեն.

Պոլսահայ բարբառում այդ զուգահեռականությունը, այսինքն համադրական ածանցյալ բայի փոխարինումը բաղադրյալով, ավելի լայն տարածում ունի քան գրական թուրքերենում: Սա առավելապես խոսակցական թուրքերենի և նրա բարբառների օրինաչափությունների արտացոլումն է.

Օրինակներ՝

...զահերես թող կուտամ, որ դուլլս կտորվի, դեռ անցյալ շարթումերամեթ ընել տվի... հ. 8. էջ 156.

մերամեթ ընել—meramet etmek/merametlamak «ուղղել», «վերանորոգել»

մերամեթ—meramet «վերանորոգում»

...մի խմեց, ես զոռ շեմ ընեք... հ. 1. էջ 147.

զոռ ընել—zor etmek/zorla mak ստիպել, հատկացրել

զոռ—zor «ստիպել»

Գրական թուրքերենի saymak բայը պոլսահայ բարբառում փոխարինվում է ուրիշ՝ տարրալուծական ձևով, որը գործածական է խոսակցական լեզվում (sayge etmek):

...ես կուզեմ որ հարսս ինքն իրմե սալղի ընե և աշխատի... 4. 7.

էջ 261:

սալղի ընել—saygi etmek/saymak «հարգել»

սալղի—saygi «հարգանք»

...բռնաբեր կը բերեն և ամեն տեղ տալտըրմա կընեն... 4. 7. էջ 287,
տալտըրմա ընել—daldırma etmek «մտցնել»

Բայց (մտցնել, խոթել) հայկական տարբերակում վեր է ածվում
բաղադրիչ բայի, որը կազմված է բայական անունից՝ daldırma և
օժանդակ «ընել» (etmek) բայից:

Ինչպես երևում է օրինակներից, վերը բերված բոլոր բաղադրյալ
բայերը ներգործական են, նրանց անվանական մասը նշանակում է
գործողության անուն, (որը կարող է ունենալ ուղղակի լրացում,
օրյեկտ կամ ձև):

Չփոխարկվող բաղադրիչ բայերը ընել (etmek)-ի հետ՝

...շիտակը Առաքել աղան սուտ լախըրտը չընենր... 4. 10. էջ 80.

լախըրտը ընել—lakirdi etmek խոսել

լախըրտը—lakirdi «խոսք» «խոսակցություն»

...յիկուր, կտոր մը յարտըմ ըրե... 4. 5. էջ 269.

յարտըմ ընել—yardım etmek «օգնել»

յարտըմ—yardım «օգնություն»

...որ շափաղընը թերս խալթ չընե... 4. 7. էջ 225.

խալթ ընել—haltetmek «հիմարություն անել»

խալթ—halt «հիմարություն», «անմիտ արարք»

...մարդիկ հավիտյան իրարու արյուն պիտի խմեն և իրարու քյու-

ֆուր պիտի ընեն... 4. 9. էջ 175.

քյուֆուր ընել—küfretmek «հայհոյել», «անպատվել»

քյուֆուր—küfür, «հայհոյանք»

...Ի՛նչ վնաս ունի, դուն ալ ումուր կընես... 4. 1. էջ 159.

ումուր ընել—umur etmek «անհանգստանալ»

ումուր—umur «անհանգստություն»

...Ի՛նչ կընեք պարոն Միհրան, թող տվեք, որ լաստիկները հանե,

զահմեթ մի ընեք... 4. 1. էջ 199.

զահմեթ ընել—zahmet etmek «անհանգստանալ», «ենդունություն
կրել»

զահմեթ—zahmet «աշխատանք», «դժվարություն», «անհանգստու-
թյուն»

...թոքա մը ընենք... 4. 7. էջ 228.

թոքա ընել—toka etmek կենաց խփել

թորա—toka «կենաց»

...բայց պեքճին տանին առջև կեցած շարունակ փատը զարնելն մերաք չըրի... հ. 8. էջ 168.

մերաք ընել—merak etmek «անհանգստանալ», «հետաքրքրվել».

մերաք—merak «հետաքրքրասիրություն» «հետաքրքրություն», «անհանգստություն», «վախ», «ահաբեկում»:

Վերը բերված օրինակներում ներգործական բայերի անվանական մասը նշանակում է առարկա, հետևանք կամ վիճակ: Թուրքերեն լեզվում բայը իր բայակազմական դերում ունի ոճական համանիշներ eylemek «անել» «արտադրել», «կատարել» համանիշները, որոնք հանդիպում են պաշտոնական-գրասենյակային լեզվում:

Kılmak «անել»-ը օգտագործվում է շատ սակավ, buyurmak «հրամայել», սցանկանալ» և etmek բայի փոխարեն, նրբ գործողությունը կատարվում է բարձրապաշտոն մարդու կողմից, կամ այնպիսի անձի կողմից, որին դիմում են հատուկ հարգանքով: Etmek բայի այս ոճական համանիշները սահմանափակ կիրառություն ունեն իր իսկ թուրքերենի մեջ, այդ պատճառով փոխառված բայերում հայերենում, առավել ևս խոսակցական լեզվում, բոլորը փոխարկվում են etmek օժանդակ բայով:

Շատ թուրքագետների բաղադրյալ բայերի շարքն են դասում կապակցությունները (անուն-բայ) olmak «լինել» «արվել» «դառնալ» ...չիտեմ... վերեմ պիտի ըլլամ ձեր ձեռքին... հ. 9. էջ 220.

վերեմ ըլլալ—verem olmak «թորախտով հիվանդանալ»

վերեմ—verem «թորախտ»

...քովիններուդ հրեսը ծուռծուռ կը նայիս կոր, որպեսզի սուա ըլլան... հ. 9. էջ 250.

սուա ըլլալ—sus olmak «լռել»

սուա—sus «լռություն»

...մարդը քսան և հինգ անգամ բիւշման կըլլա կոր ձեզի հանդիպելուն վրա... հ. 9. էջ 151.

բիւշման ըլլալ—pişman olmak «փոշմանել», «զղջալ»

բիւշման—pişman «զղջալ»

...չորբա բերբերին թրաշ եղեր ես... հ. 1. էջ 113.

թրաշ ըլլալ—tıraş olmak «սափրվել»

թրաշ—tıraş «սափրում»

...և այնքան աղմուկներ պիտի ընեմ, որ ամեն մարդ թաճիզ ըլլալ... հ. 9. էջ 191.

թաճիզ ըլլալ—taciz olmak «անհանգստանալ», «նեղվել», «հոգնեցնել»

թանկիզ—taciz «նեղութուն», «անհանգստութիւն պատճառում»

...որպեսզի սա մարդոց մուհիթան լըլլամ... հ. 9. էջ 207.

մուհիթան ըլլալ—muhtaç olmak «կարիք զգալ»

մուհիթան—muhtaç «կարիք»

...մարդուս արյունը կալըվի, լեղին կը բրդի կամ սըրաճա կըլլա...

հ. 10. էջ 158:

սըրաճա ըլլալ—siraca olmak «խլախտով հիվանդանալ»

սըրաճա—siraca «խլախտ»

Olmak բայը բառակազմական դերում մոտենում է—lan-/len—
աֆիքսին:

Թուրքերենում այդ աֆիքսների միջոցով կազմված այն ածանց-
յալ բայերը, որոնք հաճախ օգտագործվում են հատկապես այս ձե-
վով, հայերեն տարբերակում կիրառվում են միայն որպես տարրա-
լուծական բայեր: Այս փոխարկումը ածանցյալ բայից տարրալու-
ծականի կրկին թուրքերեն խոսակցական լեզվի օրինաչափութուն-
ներից մեկի արտացոլումն է:

...կարգվի շուգելը շատ մերաք եղալ ինձի... հ. 6. էջ 225:

մերաք ըլլալ—merak olmak «անհանգստանալ»

մերաք—merak «հետաքրքրություն», «հետաքրքրասիրություն»,
«անհանգստություն»

...բան մը կա, որ ինձ շատ մերաք նղած է... հ. 1. էջ 58.

մերաք ըլլալ (նայիր վերև)

...գոնն այս գիշեր շուուխով-շոճուխով մասխարա ըլլանք և պալո
երթանք հ. 6. էջ 94.

մասխարա ըլլալ—maskara olmak «ծիծաղի առարկա դառնալ»

մասխարա—maskara «ծիծաղի առարկա»

...մորդ յարտախ ըլլաս պարի... հ. 5. էջ 269.

յարտախ ըլլալ yordak olmak «օգնական դառնալ»

յարտախ—yordak «օգնական»:

Բոլոր բայական համադրությունները ըլլալը-ի հետ ունեն
չնդոք, ընդհանուր անդրադարձ կամ կրավորական նշանակություն:
Դրանց անվանական մաս կարող են դառնալ գոյականներ, ածա-
կաններ (ինչպես մեր օրինակներում):

Բացի վերը քննարկված՝ բաղադրյալ բայերի կազմավորման
ձևից, թուրքերենում բայական արտահայտությունների կազմավոր-
ման համար կա նաև զուտ շարահյուսական ձև: Դրանք դարձված-
բարանական կալուն համադրություններ են, կազմված լրացումից
(պարազայից, ննթակայից և բայական ստորոգյալից):

Այս բայական դարձվածքաբանություններում անվանական

մասի և բայի հարաբերակցութիւնը հիմնված է բառակազմութիւն-
ների համար բնորոշ շարահյուսական հարաբերութիւնների վրա:

Այս կայուն բառակազմութիւնները պոլսահայերի լեզվին են
անցել նույն տեսքով, ինչպես և etmek և olmak-ով կազմված բա-
ղադրյալ բայերը, այսինքն դրանց անվանական մասը թուրքական
է, իսկ բայը—պատճենած:

Դիտարկենք մի քանի օրինակներ:

...հինգ դուրուշով շալըմ կը ծախեր... հ. 1. էջ 63.

շալըմ ծախել—çalim satmak «երևակայել», «ձևացնել»

ծախել—satmak «վաճառել»

շալըմ—çalim «երևակայութիւն»

...եկուր այս անգամ շղոանք տե շիֆտե մը նետենք... հ. 10. էջ 291.

շիֆտե նետենք—çifte atmak «աքացի տալ»

նետել—atmak «նետել»

շիֆտե—çifte «աքացի»

...թաքլաք մը նետել տվեք... հ. 1. էջ 126.

թաքլաք նետել—taklak atmak «թափալել»

նետել—atmak «նետել»

թաքլաք—çifte «թափալել», «մահվան օղակ»

...եթե աղչիկ մը յուր սիրեկանը կորուսնե պակկա նետել կուտա...

հ. 2. էջ 155.

պակկա նետել—bakla atmak «բախտ բացել»

պակկա—bakla «բախտ»

...աղեկ, տղաս ալ թող թոփ նետել սորվի... հ. 8. էջ 173.

թոփ նետել—top atmak «թնդանոթից կրակել»

թոփ—top «թնդանոթ»

...կը տեսնանք, աս ալ մեզ թոփ նետել տալու կը նայի... հ. 2. էջ 37.

թոփ նետել—top atmak «սնանկանալ», «ցնդել օդ»

նետել—atmak «ցնդել, նետել»

թոփ—top «թնդանոթ», «զենք»

...համոզված եմ ես, որ աղեկ բարա կոտրեցիր հ. 10. էջ 185.

բարա կոտրել—para kırmak «վատտակել»

բարա—para «փող»

...պոնո մը ունիս քովս... ձեզի կոտրել տալու եկա... հ. 10. էջ 27.

պոնո կոտրել—bono kırmak «մուրհակ զեղչել»

կոտրել—kırmak «կոտրել», «չարդել»

պոնո—bono «մուրհակ», «չեկ»

...էֆենդի բարադ կավրեմ... հ. 2. էջ 108.

բարա ավրել—para bozmak «մանրել փողը»
ավրել—bozmak «փշացնել», «բանդել», «մանրել»
...գործերուն մեջ բիշվեթ շեմ ուտեր... Գ. 2. էջ 58.

բիշվեթ ուտել—rüşvet yemek «կաշառք վերցնել»
ուտել—yemek «ուտել»

բիշվեթ—rüşvet «կաշառք»

...ինչ կրեսն աղբար, ֆայիլները կառնենք ու յան կուգանք... Գ. 3.
էջ 99.

յան գալ—yan gelmek «հանդատանալ»

գալ—gelmek «գալ»

յան—yan «կողմ»

...վազ անցա բուկին ընելիք յարտըմեդ... Գ. 5. էջ 269.

վազ անցնել—vaz geçmek «հրաժարվել», «միտքը փոխել»

անցնել—geçmek «անցնել»

վազ—vazi/vaiz «խրատ», «բարոզ»

...սիկարա մը կըխմեք, էֆենտի... Գ. 9. էջ 250.

սիկարա խմել—sigara içmek «ծխել» (սիգար)

խմել—içmek «խմել»

սիկարա—sigara «սիգար»

...ուրեմն դարար տանք ու լմցնենք... Գ. 2. էջ 205.

դարար տալ—karar vermek «որոշում ընդունել»

տալ—vermek «տալ»

դարար—karar «որոշում»

Կայուն քառակապակցությունների մեջ կան այնպիսիք, որոնք պոլիսահայերենում պատճենած են ամբողջապես—ինչպես անվանական, այնպես էլ բայական մասերը:

...և հսկել, որ գիշերները շրացվի և պազ շառնե... Գ. 8. էջ 205.

պազ առնել—soguk almak «մրսել»

պազ—soguk «ցուրտ», «սառը»

առնել—almak «վերցնել»

Նույն սկզբունքով է կազմված նաև «հազալ» բայը: Թուրքերենում այդ բայը բաղադրյալ չէ (öksürmek) և այդ ձևը բառարանները չեն տալիս: Պոլիսահայ բարբառում կա հենց այդպիսի մի օրինակ, որը խոսում է այդպիսի ձևի առկայության մասին Ստամբուլի թուրքերեն խոսակցական լեզվում... հազ մը առինք... Գ. 7. էջ 223.

հազ առնել—«հազալ»

...պատասխանը շառնելու համար հեռագիր քաշին... Գ. 9. էջ 287.

հեռագիր քաշել—telegraf çekmek «հեռագրել»

հեռագիր—telegraf «հեռագիր»

քաշել—çekmek «քաշել»

Պոլսահայ բարբառի մեջ թուրքաբանությունների ներթափանցման ուսումնասիրությունը (ձևաբանական ու շարահյուսական առումներով) հիմք է տալիս եզրակացնել, որ մի շարք դեպքերում այն պայմանավորված է երկու լեզուների տիպոլոգիական կառուցվածքների ընդհանրությամբ, ընդհանրություն, որը հնարավորություն է տալիս համեմատաբար հեշտությամբ հայկական բաղադրամասերը փոխարինել թուրքականով, շխախտելով իր իսկ կառուցման ընդհանուր սկզբունքը:

Տարրալուծական բնույթի բայերի մի այլ մեծ խումբ պոլսահայ բարբառում (ինչպես նաև Երևանի, Նոր Նախիջևանի և ուրիշ բարբառներում գոյարկվում է թուրքական բայական—mis անվան և հայերեն ընել և ըլլալ օժանդակ բայերից կազմված բառակապակցությունների ձևով:

Անվանական այսպիսի կազմամաս ունեցող բաղադրյալ բայերը ավելի շատ բնորոշ են Կոստանդնուպոլսի՝ քան թե հայկական մյուս բարբառներին:

Սակայն բուն թուրքերեն լեզվում բաղադրյալ այս բնույթի բայերը գոյություն չունեն:

Նման ձևի բաղադրյալ բայերի հայոց լեզվի մյուս բարբառներում նույնպես տարածված լինելը վկայում է այդ փոխառությունների ոչ թե թուրքական, այլ թյուրքական բնույթի մասին: Այն վերաբերում է ավելի վաղ ժամանակաշրջանների, քանի որ թուրքերեն լեզվում իսկ mis ձևը զարգացել է որպես verbum finitum, իսկ mis ձևի ինդիֆերենտությունը ժամանակի նկատմամբ, որը դիտվում է պոլսահայ բարբառի տարրալուծական բայերի նշանակալից խմբերում, վերաբերում է այդ ձևի ավելի վաղ վիճակին:

Դեռևս պրոֆեսոր Ժ. Դենին իր «Թուրքերեն լեզվի քերականություն» գրքում անդրադարձել է այն փաստին, որ անգամ «հնում—mis -(i)n... -ig... ձևերը կիրառվել են որպես գործողության անուններ»¹:

Ն. Կ. Դմիտրիևը նույնպես նշել է, որ դեռևս օրխոնյան արձանագրություններում «միշտ»-ը միաժամանակ հանդես է գալիս որպես verbum infinitum (դերբայ, բայական անուն) ինչպես նաև

¹ J. Deny, Grammaire de la langue turque (dialecte osmanli), Paris, 1920, стр. 1113, § 716.

verbum finitum (անցյալ ժամանակների որևէ մեկի նշանակությամբ)²;

Ա. Գարենը նույնպես այն տեսակետին է, որ—miš—miş ձևը գործածվում է ածականաբար, գոյականաբար և որպես ստորոգյալ³:

Ե. Վ. Սևորդյանը բայական աֆիքսավոր անունների մեջ տարբերակում է երկու խումբ. առաջին—miš-ով ածանցյալներ, որոնք անտարրեր են կատարյալ ձևի նկատմամբ, երկրորդ՝ այն ածանցյալները, որոնցում կատարյալի իմաստը ավելի կամ պակաս հստակությամբ է ի հայտ գալիս: Առաջին խումբը բնորոշ է սվլյալ ձևի ավելի վաղ ժամանակների, երկրորդը՝ հետագա ժամանակաշրջանի համար: Այդ տարբերությունները խմբերի միջև կանխորոշում են նաև իմաստների կազմի ու բնույթի տարբերություններ:

Խմբային այս տարբերակները զանազանություն են մտցնում նաև իմաստների թե՛ բնույթի, և թե՛ կազմի մեջ:

Առաջին խմբին պատկանող ածանցյալներին բնորոշը որևէ պրոցեսի անվան նշանակություն արտահայտելն է:

Միանգամայն հիմնավոր է նշել, որ հայերենի հիշյալ բնույթի բաղադրյալ բայերում—miš-ով կազմված անվանական մասը փրենից բայական անուն է ներկայացնում, որը նշանակում է պրոցեսի անվանում, և ոչ թե թուրքական կամ ադրբեջանական տիպի դերբայ:

Այժմ քննենք «միշ»-ով և «րնել» օժանդակ բայով կազմված մի քանի բաղադրյալ բայեր:

...չենք ուզեր, որովհետև անոր քյուլ յութտուրմիշ շենք կընար բնել... Կ. Զ. էջ 56.

հայ.—քյուլ յութտուրմիշ րնել—«խաբել»

թուրք. kül yutturmak—«խաբել»

քյուլ յութտուրմիշ—kül yutturmuş «խաբերայություն», «խաբել»

...պոթին մը առ ըսի, հիներս յամալաթմիշ րնելով բերանս զոցեցիր... Կ. Զ. էջ 65.

² Н. К. Дмитриев. К вопросу о значении османской глагольной формы «мыш», ЗКВ, II, вып. I, 1926, стр. 10.

³ A. von Gabain alttürkische Grammatik, Leipzig, 1950, стр. 114.

⁴ Э. В. Севортян, Аффиксы именного словообразования в азербайджанском языке, М., 1966, стр. 348.

⁵ Զ. ր. Ա ճ ա յ ա ն, Հայերենի լիակատար քերականություն, Երևան, 1961 թ. Կ. 4, գիրք 2, էջ 489—498:

հայ.—յամալաթմիշ ընել—նորոգել, կարկատել
թուրք.—yamalatmakze—նույն նշանակութիւնն ունի
յամալաթմիշ—yamalatmeş—գործողութիւն անուն, կազմված է
yamalatmak—բայից:

...գողութիւն ընե՞մ, մարդ տուլանտըրմիշ ընեմ...

հայ.—տուլանտըրմիշ ընել «խարել»

թուրք.—dolandermak նույնը

տուլանտըրմիշ—dolandermiş միևնույն բայից՝ գործողութիւն
անուն

...շատ խայնաթմիշ ըրինք... հ. 8. էջ 334.

հայ.—խայնաթմիշ ընել «եռացնել»

թուրք.—kaynatmak նույնը

խայնաթմիշ—kaynatmış—միևնույն բայից կազմված գործողու-
թիւն անուն է:

...քեզի յախըշտըրմիշ շեմ ընեք կոր այս խոսքերը... հ. 6. էջ 15.

հայ.—յախըշտըրմիշ ընել—«արժանի, սաղական համարել»

թուրք.—yakıştırmak նույն նշանակութիւնը ունի

յախըշտըրմիշ—yakıştırmış—միևնույն բայից կազմված գոր-
ծողութիւն անունը

...ինչ ընելիքս շաշըրմիշ եմ ըրեք... հատ. 9. էջ 175.

հայ.—շաշըրմիշ ընել—շփոթվել, շվարել

թուրք.—ş aşırmak նույնը

շաշըրմիշ—ş aşırmış միևնույն բայից կազմված գործողութիւն
անուն:

Մի շարք դեպքերում բայական ձևերը կազմված են բայասեռի
հիմքերից, որոնցում սեռի ցուցիչը երբեմն բառակազմական, եր-
բեմն էլ ուղղակի սեռը տարբերակող (հարկադրական, միջին-ան-
դրադարձ, կրավորական և այլն) նշանակութիւն ունի:

...ամա առ ու ան մեզի այըպլամիշ պիտի ընե նդեր... հ. 2. էջ 150.

հայ.—այըպլամիշ ընել «ամոթանք տալ» պախարակել»

թուրք.—ayıplamak նույնը

այըպլամիշ—ayıplamış միևնույն բայից կազմված գործողու-
թիւն անուն:

Այն բաղադրյալ բայերում, որոնց անվանական մասը որևէ
պրոցեսի անվանում է և պերֆեկտիվ նշանակութիւն չունի, օժան-
դակ բայ է դառնում ինչպես և վերոհիշյալ օրինակներում, ընել-ը:

Այն բաղադրյալ բայերը, որ կազմված են olmak օժանդակ
բայով, անվանական մասը ոչ թե որևէ պրոցեսի անվանում է նշա-

նակում, ասլ հատկանիշ՝ անկախ բայական ժամանակից, շնայած կատարյալի իմաստը ըստ հրեույթին գերակշռում է:

Դիմենք օրինակներին:

...շեմ ուղեր, պե ատամ, Շիյերս սղլամիշ կըլլա կոր... հ. 1. էջ 120 հայ.—սղլամիշ ընել—«ցալալ, կսկծալ»

Թուրք sızlamak նույնը

սղլամիշ—sızlamış «ցավացող, կսկծացող»

...բեր փաթլամիշ ըլլանք ու ելլանք... հ. 6. էջ 15.

հայ.—փաթլամիշ ըլլալ—«պայթել», «տրաքել»

Թուրք.—patlamak «պայթել», «տրաքել»

փաթլամիշ patlamış «կուշտ կերած», «տկոած»

...փաթլամիշ ըլլալ կուղես նե՝ եղիր... հ. 6. էջ 177.

...մինչև պայաթլամիշ ըլլան շենք կրնար տալ... հ. 8. էջ 183.

հայ.—պայաթլամիշ ըլլալ—«շորանալ», «հնանալ», «քարթուանալ»

Թուրք. bayatlamak նույնը

պայաթլամիշ—bayatlamış «շորացած», «հնացած», «քարթու-

ացած»

...պեյնզըդ սոլմուշ եղավ... հ. 10. էջ 98.

հայ.—սոլմուշ ըլլալ «գունատվել»

Թուրք—solmak նույնը

սոլմուշ—solmuş «թոշնած», «գունատ»

...իյնալը յարամիշ եղեր է քեղի... հ. 6. էջ 36.

հայ.—յարամիշ ըլլալ «օգտակար», «լինել», «պետք լինել»

Թուրք—yaramak նույնը

յարամիշ—yaramış «պետքական», «օգտակար»

...անոնք ալ վաղը պիտի չյուրիմիշ ըլլան...

հայ.—չյուրիմիշ ըլլալ «նեխել», «հոտել», «փշանալ»

Թուրք.—çürümek նույնը

չյուրիմիշ—çürümüş «նեխած», «հոտած» «փշացած»:

Վերը թվարկած տարրալուծական բայերի քննությունը ցույց է

տալիս, որ նրանք կազմված են ըստ հայկական մոդելի՝ թյուրքա-

կան միջ բայական անվանական ձևի բառա-իմաստային կիրառ-

մամբ: միջ-ի տվյալ ձևի նշանակութունները, որոնք հայտնի են

հին թյուրքական հուշարձաններից, շեն պահպանվել արդի թյուրք

լեզուներից և ոչ մեկում: Այդ իսկ պատճառով, հայերենի որոշ

բարբառներ, մասնավորապես պոլսահայ բարբառը, կարող են վե-

րին աստիճանի օգտակար լինել թյուրքական լեզուների օրինաչա-

փությունների ուսումնասիրման համար:

ТУРКИЗМЫ (ГЛАГОЛЫ) В КОНСТАНТИНОПОЛЬСКОМ
ДИАЛЕКТЕ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Резюме

Настоящая статья посвящена глаголам-туркизмам в константинопольском диалекте армянского языка—одной из частных проблем, касающихся армяно-тюркских языковых отношений, исследования которых привели к образованию целого направления в тюркологии, получившего название Армено-Turcica.

На основе практического материала, взятого из произведений классика западноармянской литературы А. Пароняна, автором сделана попытка дать классификацию и анализ туркизмов, их лексико-семантическую и морфологическую характеристику.

Автор приходит к выводу, что изучение константинопольского и некоторых других диалектов армянского языка, тесно соприкасавшихся с тюркскими языками, может оказаться важным подспорьем для изучения тюркской диалектологии и истории развития тюркских языков.